ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 175

19 նոյեմբերի 2013 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածի 3-րդ կետով, ինչպես նաև <<Իրավական ակտերի մասին>> օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ կետերով ***որոշում եմ***

1. Գործառական դասակարգման բաժին 09, խումբ 5, դաս 1 (մարզադպրոցի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի 4562.7 թիվը փոխարինել 4142.7 թվով:
2. Գործառական դասակարգման բաժին 08, խումբ 2, դաս 1 (գրադարանի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4111 (աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի 6057.8 թիվը փոխարինել 6507.8 թվով, 4221(գործուղումներ)հոդվածի 30.0 թիվը փոխարինել 0 թվով:
3. Գլխավոր մասնագետ հաշվապահ Ա. Սաղաթելյանին.
   Նախահաշիվների և ժամանակացույցների մեջ կատարել նշված փոփոխությունները:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.